ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻԻ
«ՍԱՄԱՐԻԹԵՐ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

ШИРАКСКАЯ ОБЛАСТЬ г. ГЮМРИ
«САМАРИТЕР РЕАБИЛИТАЦИОННЫЙ
ЦЕНТР» АОЗТ

Հայաստանի Հանրապետություն
ք. Գյումրի Մանուշյան 8
ՀԵՌ./ +374/ -312 3 02 02
էլ. փոստ՝ samaritergnum@gmail.com

Республика Армения
г. Гюмри Манушян 8

04/ 015 14.01.2015թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Սամարիթեր վերականգնողական կենտրոն>> ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «**ԳՍՎԿ-15/1-ՇՀԱՊՁԲ-11/4**»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք.Գյումրի, Մանուշյան 8, տնօրենի ընդունարան հասցեով, մինչև 2015թ. հունվարի 27-ը, ժամը 14-00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Ա.Բադիշյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն <<Սամարիթեր վերականգնողական կենտրոն>> ՓԲԸ-ն շենքում ք.Գյումրի, Մանուշյան 8 տնօրենի ընդունարան հասցեով, մինչև 2015թ. հունվարի 27-ին, ժամը 14-00-ն :

Գնման առարկա է հանդիսանում <<Սամարիթեր վերականգնողական կենտրոն>> ՓԲԸ կարիքների համար՝ Դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերումը:

<<Սամարիթեր վերականգնողական կենտրոն>> ՓԲԸ ի կարիքների համար՝ Դեղորայքի և պատվաստանյութերի մատակարարման (որոնք կազմված են՝ 101 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը ներկայացված են կից ներկայացված պայմանագրի նախագծի N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Մասնակիցները հայտով ներկայացնում են նաև իրենց կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական նկարագրերը:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և մասնակիցների կողմից ներկայացվող փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<Սամարիթեր վերականգնողական կենտրոն>>ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ samaritergnum@gmail.com:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Հարգանքով՝

տնօրենի պաշտոնակատար՝ Վ.Ներգաձե